ՀԱՅԿԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Հաստատված է՝
Հայկական բժշկական ինստիտուտ
Գիտական խորհրդի 01.07.2022
թիվ 12 նիստում
Ռեկտոր Է.Գ. Ասատրյան

ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

Հայկական բժշկական ինստիտուտի

գիտահետազոտական աշխատանքների

ԵՐԵՎԱՆ 2022

Հայկական բժշկական ինստիտուտի

գիտահետազոտական աշխատանքների

Ընդհանուր դրույթներ

Հայկական բժշկական ինստիտուտի ամբիոններում աշխատում են ճանաչված մասնագետներ , որոնք դասավանդման զուգահեռ զբաղված են գիտահետազոտական գործունեությամբ տեսական և կլինիկական տարբեր ոլորտներում:

Հայկական բժշկական ինստիտուտի լայնորեն համագործակցում է Հանրապետության բժշկակենսաբանական ուղղվածության գիտահետազոտական հաստատությունների հետ ր պատահական չէ, որ ինստիտուտի դասախոսների զգալի մասը հանդիսանում են այդ հաստատությունների աշխատակիցներ: Այդ հանգամանքը հնարավորություն է ընձեռնում ուժեղացնել ուսուցման հետազոտական բաղադրիչը:

Հայկական բժշկական ինստիտուտը գիտահետազոտական գործունեության իրականացման համար նախատեսում է կարճաժամկետ , միջնաժամկետ և երկարաժամկետ ծրագրեր, շեշտադրելով գերակա նպատակը, խնդիրները, քայլերը:

Ինստիտուտի գիտահետազոտական ռազմավարություն

- Զարգացնել ինստիտուտի գիտաուսումնական գործունեությունը
- Խրախուսել ինստիտուտի գիտահետազոտական գործունեությունը:
- Ապահովել կրթության գիտկան կապը
- Զարգացնել միջազգային գիտահետազոտական և ուսումնական համագործակցությունը:
- Լայնորեն ներգրավել ինստիտուտի երիտասարդ դասախոսներին և ուսանողությանը գիտահետազոտական աշխատանքներում:
- Կազմակերպել և իրականացնել գիտահետազոտական կենտրոնների հետ:

- Ակտիվացնել ինստիտուտի աշխատակիցների մասնակցությունը տարբեր գիտական ծրագրերում:
- Աջակցել և խրախուսել դասախոսների և ուսանողների ստեղծագործական և հետազոտական նախաձեռնություններին:
- Խրախուսել բարձր վարկանիշ ունեցող հանդեսներում ինստիտուտի անվամբ հրապարակումներին: